

Այժմ հայրությունը հաստատելու  
լավագույն ժամանակն է:



Ծնված օրվանից երեխաներին անհրաժեշտ է  
երկու ծնողների աջակցությունը: Ձեր երեխային  
տվեք կյանքի լավագույն հնարավորությունը՝  
հաստատելով հայրությունը որքան հնարավոր  
է շուտ: Ձեր որոշումը ձեր երեխային էմոցիոնալ,  
ֆինանսական և բժշկական օգուտ կբերի:

Երբ հայրությունը հաստատված է, երկու  
ծնողներն այցելության կամ երեխային խնամքի  
իրավունք ունեն:



Դիմեք երեխաների օգնության  
տեղային գործակալություն՝

**866-901-3212 անվճար  
հեռախոսահամարով**  
(ԱՄՆ-ում)

**TTY 866-399-4096**



Arnold Schwarzenegger, Governor  
State of California

Kimberly Belshé, Secretary  
California Health and Human Services Agency

Jan C. Sturla, Director  
California Department of Child Support Services

Երեխաների Օգնության Ծառայությունների  
Կալիֆորնիայի Բաժինը ծնողներին կամ  
խնամակալներին իրավական  
ծառայություններ չի տրամադրում:

[www.childsup.ca.gov](http://www.childsup.ca.gov)

PUB 244 (11/09)



Supporting California's Children

## Հայրության հաստատում (Երեխայի հայր)



Department of  
Child Support Services

## Ի՞նչ է հայրությունը:

Հայրությունը նշանակում է երեխայի իրավական հայր լինելը: Հայրությունը կարող է հաստատվել դատարանի միջոցով, կամ երկու ծնողները հիվանդանոցում լրացնում են ու ստորագրում հայրության հայտարարությունը և հանձնում այն նահանգին:



## Ինչպե՞ս է հաստատվում հայրությունը:

### Ամուսնություն

Երբ կինն ամուսնանում է և հղիանում, ապա ենթադրվում է, որ նրա ամուսինը հանդիսանում է երեխայի իրավական հայրը, և հայրությունը հաստատվում է առանց որևէ իրավական գործընթացների:



### Հայրության հայտարարություն

Չամուսնացած ծնողների համար հայրությունը հաստատելու հեշտագույն միջոցն է ստորագրել Հայրության Հնարավորություն ծրագրի Հայրության հայտարարության ձևը: Այն տրվում է չամուսնացած ծնողներին հիվանդանոցում, երբ ծնվում է երեխան: Երկու ծնողները պետք է ստորագրեն այս ձևը, որպեսզի այն վավեր համարվի: Հայրության հայտարարությունը կարելի է նաև ձեռք բերել երեխաների օգնության տեղային գործակալություններում, տեղային գրանցման բյուրոներում և դատարաններում: Մանրամասն տեղեկությունների համար զանգահարեք Հայրության Հնարավորություն ծրագրին (Paternity Opportunity Program-POP)՝ (866) 249-0773 հեռախոսահամարով:

### Դատարանի որոշում

Հայրությունը կարող է հաստատվել դատարանի որոշմամբ: Եթե ծնողներից որևէ մեկը գործ է բացել երեխաների օգնության տեղային գործակալությունում, ապա երեխաների օգնության տեղային գործակալությունը կարող է ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը դատավճիռ ստանալու նպատակով:

### Գենետիկ ստուգում

Ծնողը կամ երեխաների օգնության տեղային գործակալությունը կարող են գենետիկ ստուգում պահանջել, եթե անհրաժեշտ է հայրության կենսաբանական ապացույց, նախքան տղամարդը հաստատվի որպես իրավական հայր:

## Ինչու՞ է կարևոր հաստատել հայրությունը:



Երեխային տրվող օգուտներ են՝

- Իմանալ, թե ով են իր երկու ծնողները:
- Ստանալ իր ծնողների օրինական փաստաթղթերը:
- Հոր անունը կարող է գրվել ծննդյան վկայականում:
- Աջակցություն երկու ծնողներից:
- Ստանալ ընտանիքի բժշկական պատմությունը:
- Առողջապահական ապահովագրում, եթե առկա է:
- Ծնողներից ժառանգելու իրավունք:
- Սոցիալական ապահովման կամ վետերանների նպաստները ստանալու իրավունք, եթե առկա են:

## Հայրության հաստատումը դատարանի որոշմամբ

Երբ տղամարդն անվանվում է որպես երեխայի հայր, ապա նրան տրվում են իրավական փաստաթղթեր հայրությունը հաստատելու և/կամ երեխայի օժանդակ օգնության և առողջապահական ապահովագրման համար: Այս փաստաթղթերը կոչվում են դատական ծանուցագիր և բողոք:

Դատական ծանուցագիրը և բողոքը հանձնվում են ենթադրվող հորը կամ նրա անունից գործող անձին: Եթե ենթադրվող հայրը գիտի, որ նա երեխայի հայրն է, նա կարող է գնալ երեխաների օգնության տեղային գործակալություն և ստորագրել համաձայնագիրը (պայմանագիրը):

Եթե դատական ծանուցագրում և բողոքում նշված անձը համարում է, որ ինքն երեխայի հայրը չէ, ապա նա պետք է ծանուցումը ստանալուց 30 օրվա ընթացքում դատարանին ներկայացնի բողոքի պատասխանը: Նա կարող է դիմել երեխաների օգնության տեղային գործակալություն և ստուգում խնդրել որոշելու իր հայրությունը: Ստուգման համար անպայման չէ արյուն հանձնել. այն կարող է արագ ու անցավ անցկացվել:

Ենթադրվող հայրն ունի 30 օր դատական ծանուցագրին և բողոքին օրինականորեն պատասխանելու համար: Հակառակ դեպքում դատարանը նրան որպես հայր կհաստատի և կարող է պահանջել, որ նա օժանդակ օգնություն և առողջապահական ապահովագրում տրամադրի երեխային:

Չափազանց կարևոր է, որ ենթադրվող հայրը պատասխան ներկայացնի 30 օրվա ընթացքում, որպեսզի նրա եկամուտը ու երեխայի հետ անցկացված ժամանակը հաշվի առնվեն, երբ դատարանը որոշումներ է կայացնելու երեխայի օժանդակ օգնություն վերաբերյալ:

